

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. հոկտեմբերի 7-ի

նիստի /արձանագրություն N 3/

1. ՀՀ բարձրագույն կրթության մասին օրենքի քննարկման արդյունքում հանձնարարել Ա. Հարությունյանին պատրաստել համապատասխան նամակ ՀՀ ԿԳ նախարարությանը:
2. «Շրջանավարտ» հիմնադրամի ստեղծման վերաբերյալ Հ. Ավագյանի զեկույցն ընդունել ի գիտություն և այդ ուղղությամբ հետագա աշխատանքները դադարեցնել,
2.1. հավանություն տալ Ա. Հարությունյանի առաջարկին և առաջիկայում հիմնել բուհի շրջանավարտների հասարակական միավորում:
3. Հավանություն տալ արվեստի 3 բուհերի համագործակցության միավորում ստեղծելու վերաբերյալ արված առաջարկին և հանձնարարել Վ. Ավանեսյանին կազմել համաձայնագրի նախագիծ:
4. Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնում կատարած ընթացիկ աշխատանքների մասին Վ. Ավանեսյանի զեկույցն ընդունել ի գիտություն,
4.1. հանձնարարել Վ. Ավանեսյանին ինտենսիվ աշխատել դրամաշնորհներ ձեռք բերելու, գործընկեր բուհերի հետ համագործակցելու ուղղությամբ:
5. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին և ամբիոնների վարիչներին 10-օրյա ժամկետում վերանայել և լրամշակել 2017-2018 ուս. տարվա ընդունելության մասնագիտական ծրագրերն ու գնահատման չափանիշները:
6. Հոկտեմբերի 4-6-ը ինստիտում կազմակերպված միջազգային գիտաժողովը գնահատել դրական:
7. Հանձնարարել մասնաճյուղերի տնօրեններին ներկայացնել թեկնածուներ մասնաճյուղերում որակի պատասխանատուներ նշանակելու համար:
8. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին մինչև հոկտեմբերի 10-ը կազմակերպել «Լավագույն ուսանող» մրցույթի ներբուհական փուլը:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան